զգիրն զայն, յելանել նորա յատեան մի լիցի ընդունելի, և միւսն վասն իրաւանցն Հայոց· զայսոսիկ դրեանս առաքեաց Կարապետ Պատրիարք 'ի Կոստանդինուպոլիս առ Գրիգոր վարդապետ խօսիլ ընդ Ցոյնս· զի պատուիրեսցեն իւրոցն չառնել զայսպիսի խարէյութիւն, (1764)։

Այլազգիք Սիոնի վերատին նորոգեցին զվէճս իւրեանց, զոր յառաջագոյն խափանեալ էին Հայք· քանզի եկեալ խնդրէին ջուր 'ի վանաց Ս· Փրկչի, զորոյ զվնասն կրեալ էին միաբանք բազում անգամ· այլ իբրեւ ոչ կարաց ողբել զմիտս նոցա թարգմանն, ազգ արար դատաւորի քաղաքին· կոչեցան յատեան մեծամեծք Սիոնի, և 'ի հարցանել դատաւորին վասն այսր՝ ետուն պատասխանի և ասեն, եթէ պակասեսցի 'ի մեզ ջուր, ունիմք սովորութիւն առնուլ զայն 'ի վանաց Ս· Փրկչի, եւ եթէ Հայք ոչ կամին տալ, հատուսցեն մեզ 18 դահեկան, զի գնեսցուք ջուր յաղբերէն Սելոմամայ· մերժեաց թարգմանն զխնդիր նոցա, թէ ոչ ունիմք զայդպիսի սովորութիւն, ոչ ջուր տալոյ և ոչ դրամ, և առաջի արար նոցա զհրովարտակն \\է· և ընթերցեալ զայն դատաւորին, մերժեաց զնոսա յերեսաց իւրոց, և պատուիրեաց նոցա մի եւս պահանջել 'ի վանաց անտի ոչ ջուր և ոչ դրամ, զի հակառակ էր Կայսերական հրամանին։

Վախճանեցաւ Յակոբ Պատրիարք Նալեան 'ի Կոստանդինուպոլիս 1764 'ի 20 Յուլիսի, և թաղեցաւ 'ի գերեզմանատունն Հայոց 'ի Պէյօղլու կոչեցեալ տեղին։

Իսկ ինքն Կարապետ Պատրիարք հրամանաւ Օսման Փաշա կուսակալին Դամասկոսի չինեալ աւարտեաց զ16 սենեակս 'ի մէջ վանաց Ս· Յակոբայ, 'ի պէտս բնակութեան ուխտաւորաց, և ետ յատակել քարամբք զտանիս եկեղեցեաց Ս· Յակոբայ, ուր եղեալ է ինքնին ձեռամբ իւրով զյիշատակարանն· Ս· Հրեշտակապետի, Ս· Փրկչի, վերնատան և Լուսաւորիչ եկեղեցւոյ 'ի տաճարին Ս· Յարութեան, և վանաց Բեթղեհէմի, և զայլ կարեւոր նորոգութիւնս յիւրաքանչիւր տեղիս։ Ի տանիս վերնատան Ս· Յարութեան եդ արձանագիր Հայերի տառիւք, այլ յետ ժամանակաց Ցոյնք անհետ արարին զայն անտի։ Սակայն 'ի միջոցի աստ կրեաց բազում նեղութիւնս եւ տուգանս